ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06 մարտի 2020թ.
Ժամը 11:30

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝
Հանձնաժողովի նախագահ՝
Լիլիթ Ոսկանյանը՝ ֆինանսատնտեսական բաժնի հաշվապահ
Անդամներ՝
Նավասարդ Նավասարդյան՝ Ավտոպարկի և տեխնիկական միջոցների պատասխանատու/ինժեներ
Հրաչյա Համբարձումյան՝ SS մոնիտորինգի պատասխանատու
Հանձնաժողովի քարտուղար՝
Արսեն Ավագյան՝ Գնումների համակարգման և կազմակերպման մասնագետ

1. **Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

1.1 «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2020թ. փետրվարի 28-ին gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. մարտի 06-ը ժամը 11:30-ն:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գտնվելու վայրերի հասցեները և գնային առաջարկները.**

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Հասցե	Ապրանքի անվանումը	Գնային առաջարկը առանց ԱԱՀ /հազ. ՀՀ դրամ/	Գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /հազ. ՀՀ դրամ/	Նախահաշվային գին հազ. ՀՀ դրամ
1	Մխիթար Այվազյան Ա/Ձ	Ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., շ.45/15	Արտացոլող բաճկոններ	2767.5	2767.5	2767.5

3. **Տվյալներ՝ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

Մխիթար Այվազյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված կարգի պահանջներին:

4. **Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմանների համապատասխանության մասին.**

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. **Հանձնաժողովը որոշեց՝**

Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել Մխիթար Այվազյան Ա/Ձ-ին, որպես հրավերի պահանջներին համապատասխան և առավել ցածր գին ներկայացրած մասնակից:

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և սահմանել «ԵԱՄՄ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում անգործության ժամկետ չկիրառելը՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի:

Հանձնաժողովը որոշեց էլ. Փոստի /easm.himnark@gmail.com/ միջոցով ծանուցել Մխիթար Այվազյան Ա/Ձ-ին՝ ընտրված մասնակից ճանաչելու մասին և ներկայացնել պայմանագրի նախագիծը, որը կկնքվի ընտրված մասնակցի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու դեպքում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լ. Ոսկանյան

Անդամներ՝ Ն. Նավասարդյան

Հ. Համբարձումյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան